

մերժել կոնսիստորիայի միջորդութիւնը Աղամեանին հոգոր կոչման մէջ ընդունելու և Դեքբենտի եկեղեցում դպիր կարգելու վերաբերմամբ՝ 26 մայիսի, թ. 228:

«աշա մէջո մասնաւու ուսութիւն մասն տողի բարձու արքական մէտրո առաջնորդութիւն և առաջնորդութիւն ըստ հայութիւնը ուսութիւն մասն առաջնորդութիւն ուստի առաջնորդութիւն մասն առաջնորդութիւն»:

Վերջին տարիները զանազան տեղերից թէ բանտարկուածներն իրենք և թէ սրանց թշուառ ընտանիքներն ու ծնողներն դիմում էին Աղքոյ Վեհափառ Հայրապետին՝ խնդրելով արկանել իրենց աղերօներն առ ոսս նորին Կայսերական Մեծութեան՝ արժանացնելու ամենասողորմած Բարձրագոյն ներմանու Հայ թրքական ընդհարութիւներից յետոյ հայերից մեծ թուով մեղադրուեցին իբր Գաշնակական կուսակցութեան պատկանելուն համար:

Նրանց դատեցին 1912 թ. սկզբներում Պետերբուրգում Սենատի առանձին դատարանով. շատերը արդար ճանաչուեցին, իսկ ումանք ենթարկուեցին պատժի, մինչև անգամ տաժմուկիր աշխատանքի, թողնելով իրենց յետերից դժբախսացած ընդանիքներ հծողներ։ Սհու և Վեհափառ Հայրապետն, որի զգայուն սրտին մօտ էր իւր սիրեցեալ զաւելների թըշուառ կացութիւնը՝ անցեալ Ապրիլի 19-ին առանձին գրութեամբ դիմեց Կովկասի Փոխարքայ Նորին Պայծառափայլուշ թիւն կուն Վարանցով՝ Գաշկովին՝ և միաժաման էլ Արդարադատութեան Նախարար՝ նորին բարձր գերազանցութիւն Շշեղավայրութիւնն անդառելով արկանել առ ոսս նորին Կայսերական Մեծութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց ամենահպատակօրէն միջնորդութիւնը «Պաշնակցութիւն» կուսակցութեանը մասնակցելու մէջ մեղադրուելու պատճառով զատազարտուածների և քննութեան ու դատի ենթարկուածների ներման համար, որպէս անձանց, որոնք մտել էին նորա գործունէութեան շրջանի մէջ հայթուրքական ընդհարութիւներից յառաջ եկած ինքնապաշտպանութեան բացառիկ պայմանների շնորհիւ»:

ի հետևումն այս միջնորդութեան նորին Վեհափառութիւնը Յունիսի 12-ին ստացել է Պետական Դումայի անդամ Պապաջանեանից հետեւեալ հեռագիրը.

«Զերդ Սրբութեան խնդիրքի համաձայն, որին աջակցեց Լիվաղիայում Կովկասի փոխարքայ կոմս Վարանցով-Դաշկովը, արդարադատութեան մինիստր Շչեգլավիտովն այսօր երեկոյեան ամենահպատակօրէն զեկուցում կանի Թագավոր Կայսրին՝ «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով Սենատի կողմից գատապարտուածների թուից 20 հոգու ներումն շնորհելու մասին»:

«Մինիստրը Զերդ Վեհափառութեան խնդիրքին համակրանքով է վերաբերուում»:

Ապա Յունիսի 16-ին Պետական Դումայի անդամ յարդելի Պապաջանեանից ստացւում է հեռագիր, իսկ 27-ին Կովկասի Տ. Փոխարքայից յատուկ զրութիւն, որոնցով հաղորդում են նորին Վեհափառութեան, որ «Լիակատար ներումն են ստացել Ա. Մեհրաբեան, Ա. Թաիրեան, Բ. Մատինեան, Հ. Սողոմոնեան, Պ. Աւագեանց, Ա. Առատամեանց, Ա. Աճապխանեանց, Ա. Անիսոնեանց, Ա. Անիսոնեանց, Մ. Գրիգորեանց, Ա. Շարաֆեանց, Հ. Ղարիբեան, Ա. Աստուածատրեան, Կ. Տ. Մարտիրոսեանց, Դանիէլեանց, իսկ Ղազարեանց, Համազասպ Օհանջանեան, Մամիկոնեան, Մարկոս Դաւթեանց, Համազասպ Սրուանձտեան ազատուած են՝ Ղազարեանցը տաժանակիր աշխատանքից և աքսորից, իսկ միացածները աքսորից՝ ստանալով ամենուրեք ապրելու արտօնութիւն, բացառութեամբ մայրաքաղաքների և մայրաքաղաքների նահանգներից, հինգ տարի ժամանակով՝ գտնուելով այդ ժամանակամիջոցում ոստիկանութեան հսկողութեան ներքոյ և քաղաքացիական իրաւունքներից զրկուելու փոխարէն՝ զրկուում են նոյն հինգ տարի ժամանակամիջոցում իրենց բոլոր առանձին իրաւունքներից և արտօնութիւններից»: Քսաներորդն առաջուց է ազատած:

